ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/06-22628 «17» 11 2020 թ.

Ա/Ձ ԱՐՏՈՒՇ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն 40/22

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները 1-ին չափաբաժնի մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը 19.05.2020թ., 20.05.2020թ., 27.05.2020թ., 12.08.2020թ. հ.06/14639 գրություններով դիմել է Ձեզ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք մատակարարելու համար, սակայն Ձեր կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

05.10.2020թ. Երևանի քաղաքապետարանը, աշխատակիցների բազմաթիվ դժգոհությունների պատճառով, Ձեր կողմից մատակարարված ջրից մեկ շիշ՝ փակ վիճակում, 18.9լ տարողությամբ ուղարկել է փորձարկման՝ պարզելու ջրի որակական

Ստացված առ 15.10.2020թ. փորձարկման N 2080 եզրակացության համաձայն, Ձեր կողմից մատակարարված ջուրը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի մանրէների առկայությամբ չի համապատասխանում ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին (փորձարկման արձանագրությունը կցվում է):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի՝ 1-ին չափաբաժնի մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀՐՉ.ՍԱՐԳՍՅԱՆ**

«ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ
Փորձարկման լաբորատորիա
ООО "СТАНДАРТ ДИАЛОГ"
Испытательная лаборатория
STANDARD DIALOG LLC
Testing Laboratory
Համապատասխանության գնահատման նշանակված մարմին
Назначенный орган по оценке соответствия
The designated conformity assessment body
www.standarddialog.com
standarddialog@gmail.com

ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025

No 006/T-048
No Ն-01(H-01)-2017

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» ՍՊԸ փորձարկման
լաբորատորիայի ղեկավար

«ՍՏԱՆԴԱՐՏ-ԴԻԱԼՈԳ» ՍՊ
ООО «СТАНДАРТ-ДИАЛОГ»
Լաբորատորիաների
ստորագրություն

Կ. Դարբինյան
անուն, ազգանուն

ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2080

առ 15.10. 2020 թ.

Արտադրանքի անվանումը — **1. Բնական աղբյուրի խմելու ջուր «ԱԿՎԱՄԱՐԻՆԱ», 18.9լ տարողությամբ պոլիկարբոնատե շշով**
/տեսակը, մակնիշը/

1/2065
/արտադրանքի կոդը/

Տեղեկություններ ՆՓ-ի մասին — *ԵԱՏՄ ՏԿ 044/2017*
/ՆՓ-ի անվանումը կամ նշագիրը/

Ներկայացված նմուշների քանակը — 18.9 լ
/նմուշների քանակը/

Նմուշների ստացման թվականը **05.10.2020**

Նմուշները փորձարկման ներկայացնողը — **ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ-**
ՀՀ, ք. Երևան, Արգիշտիի 1
/ներկայացնողի անվանումը, հասցեն/

1/2065 առ 05.10.2020
/ընտրանքի համարը և ամսաթիվը/

Ծանոթություն: արձանագրությունն օրինական է միայն կնիքի առկայության դեպքում:
Примечание: протокол действителен только при наличии круглой печати.

Փորձարկումների կատարման վայրը* STANDARD DIALOG LABORATORY

49/4,Komitas Ave., 0051
Yerevan, Armenia

Կոմիտասի պող. 49/4
0051 Երևան

0051 Ереван, пр. Комитаса
49/4, Армения

ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հ/Հ	Նմուշի համարը	Ցուցանիշի անվանումը	Փորձարկման մեթոդը սահմանող ՆՓ-ի նշագիրը	Ցուցանիշի արժեքը սահմանող ՆՓ-ի նշագիրը	Չափման միավորը	Ցուցանիշի արժեքը		Եզրակացությունը ըստ ստացված արդյունքների
						ըստ ՆՓ-ի	ստացված	
1	2	3	4	5	6	7	8	9
1.	1/2065	ՄԸԹ	ԳՕՍՏ 18963-73	ԵԱՏՄ ՏԿ 044/2017	ԳԱՄ/մլ	< 20	$1x10^5$	չի համապ.
		Պսևդոմոնաս աէրոգինոզա	ՍՏԲ ISO 16266-2015	ԵԱՏՄ ՏԿ 044/2017	ԳԱՄ/250մլ	չ/թ	առկա է	
		E. coli	ԳՕՍՏ 31955.1-2013	ԵԱՏՄ ՏԿ 044/2017	ԳԱՄ/250մլ	չ/թ	առկա է	
		ԱՑԽՄ	ԳՕՍՏ 31955.1-2013	ԵԱՏՄ ՏԿ 044/2017	ԳԱՄ/250մլ	չ/թ	առկա է	
		Էնտերոկոկկեր	ՍՏԲ ISO 7899-2-2015	ԵԱՏՄ ՏԿ 044/2017	ԳԱՄ/250մլ	չ/թ	առկա է	

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՈՒՆ 2080. **1. Բնական աղբյուրի խմելու ջուր «ԱԿՎԱՄԱՐԻՆԱ», 18.9լ տարողությամբ պոլիկարբոնատե շշով**

/ արտադրանքի անվանումը /

Ներկայացված նմուշը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E. coli, Էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի խմբի մանրէների առկայությամբ **չի համապատասխանում** ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին:

/ ՆՓ-ի անվանումը, նշագիրը և կետերի համարները/

պահանջներին ըստ ** _____

* Լրացվում է այն դեպքում, երբ փորձարկումները կատարվում են փորձարկման լաբորատորիայի տարածքից դուրս:

** Լրացվում է այն դեպքում, երբ փորձարկումների արդյունքները բացասական են:

*** Փորձարկման արդյունքները տարածվում է միայն ներկայացված նմուշին:

**** Հաշվի է առնվում չափման անորոշությունը: Այս ցուցանիշը լրացվում է ըստ անհրաժեշտության:

***** Օգտահանման կամ ոչնչացման եղանակները, պայմանները:

****** չ/հ- չի հայտնաբերվել:

******* չ/թ- չի թույլատրվում:

#-Փորձարկման մեթոդն ընդգրկված է ՓԼ-ի հավատարմագրման ոլորտում, արդիականացված չէ տվյալ տեխնիկական կանոնակարգի ոլորտում:

##-Փորձարկման մեթոդն ընդգրկված է ՓԼ-ի հավատարմագրման ոլորտում, բացակայում է ՏԿ ՓՄ-ի ցանկում:

###- Փորձարկման մեթոդն ընդգրկված է ՓԼ-ի հավատարմագրման ազգային և միջազգային ոլորտումներում, բացակայում է ՏԿ ՓՄ ցանկում:

Արձանագրությունը կազմված է 2 էջից/ 2 օրինակ/

Պատասխանատու կատարողներ

_____ Մ. Օգանովա

ստորագրությունը *անունը, ազգանունը*

Փորձարկման լաբորատորիայի ղեկավար/տեխնիկական պատասխանատու _____ Ն. Հարությունյան

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Սույն փորձարկման արձանագրությունը չի կարելի մասնակիորեն արտատպել կամ վերարտադրել:

Լաբորատորիան պատասխանատվություն կրում է միայն փորձարկման ներկայացված նմուշի համար: